ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

22.03.2014 14:41

ՀՀ փաստաբանների պալատում այսօր՝ մարտի 22-ին, տեղի է ունեցել շախմատի մրցաշար փաստաբանների միջև: Մրցաշարին մասնակցել են շուրջ երկու տասնյակ փաստաբաններ, ովքեր իրենց շախմատային գիտելիքներն են կիրարկել խաղի ընթացքում:

Պայքարի արդյունքում երրորդ հորիզոնականն է զբաղեցրել Վարդան Առաքելյանը, երկրորդ տեղը Աշոտ Շահմուրադյանը և պատվավոր առաջին տեղն է զբաղեցրել Արմեն Վարդանյանը: Փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանի կողմից առաջին երեք տեղերը գրաված փաստաբանները պարգևատրվեցին մեդալներով:

Լավագույն տասնյակի մեջ են մտել Արթուր Դավթյանը, Սերգեյ Ամիրխանյանը, Սամվել Ջաղինյանը, Ստեփան Ոսկանյանը, Վարդան Գիլոյանը, Հայկ Սահակյանը և Վահագն Գասպարյանը:

Հիշեցնենք, որ հաջորդ փուլում լավագույն արդյունք ցույց տված փաստաբանները կմրցեն ՀՀ ոստիկանության աշխատակիցների հետ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })